ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Երևան, 0023, Արշակունյաց պողոտա 7
Հեռ.՝ +374-60-474144

14.12.18. № 99/7482-18

Ձեր_____ առ _____

Ինֆորմացիայի ազատության
կենտրոնի ղեկավար
Շ. Դոյդոյանին

Հարգելի Շուշան Դոյդոյան,

Ի պատասխան 2018 թվականի դեկտեմբերի 12-ի Ձեր գրության՝ հայտնում ենք, որ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի պաշտոնական www.cadastre.am կայքէջում նախկինում առանձին չեն հրապարակվել ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները, մերժման հիմքերը: Սակայն կայքի գլխավոր էջում պարբերաբար տեղադրվում է գրասենյակներում ստացված դիմումների վիճակագրությունը: Կոմիտեի փաստաթղթաշրջանառության Mulberry, ինչպես նաև ARPIS համակարգում լրագրողների, ՀԿ-ների ներկայացրած հարցումների վերաբերյալ առանձին տվյալների արտահանման հնարավորություն այս պահին չկա, ուստի անհնար է ներկայացնել նախորդ տարիների՝ Ձեր նշած ժամանակահատվածի վիճակագրությունը:

Ինչպես բանավոր պայմանավորվել ենք, Ձեզ ենք ներկայացնում 2018 թ. սեպտեմբերից ի վեր ստացված հարցումների թիվը: Ըստ Կոմիտեի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման կողմից տրամադրված տվյալների, ARPIS համակարգ մուտքագրվել է տեղեկատվություն ստանալու 65 721 դիմում, որից արտածել դիմած լրագրողների և ՀԿ-ների թիվը, մերժումների քանակը և հիմքերը, տեխնիկապես անհնար է: Կոմիտեի Ֆեյսբուքի էջի միջոցով նույն ժամկետում ստացվել է 56 հարցում, որից 2-ը՝ լրագրողներից, 3-ը՝ Կոմիտեի աշխատակիցներից, մնացածը՝ քաղաքացիներից: Մերժվել է 7 քաղաքացու հարցում, քանի որ նրանց հարցերը չեն առնչվել Կոմիտեի գործունեությանը: (Աշխատակիցների Ֆեյսբուքի անձնական տիրույթներում լրագրողներից ստացված հարցումների թիվը, ինչպես նաև «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանում մուտքագրված պետական մարմինների կողմից կատարվող հարցումների քանակը ներառված չեն):

Ձեր նամակի արդյունքում 12.12.18 թ. հանձնարարականներ են տրվել համապատասխան օղակների ղեկավարներին՝ այսուհետ յուրաքանչյուր ամսվա ավարտին հարցումների շուրջ մանրամասն տվյալներ ներկայացնել Կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին: Պաշտոնական կայքէջի Տեղեկատու բաժնում նույն օրը բացվել է առանձին՝ «Հարցումների

վիճակագրություն» ենթաբաժին (https://www.cadastre.am/page/445), որը կթարմացվի յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո:

Հարգանքով՝
Գոհար Գրիգորյան

12/14/2018

X

VERIFIED OCSP 14/12/2018 15:44:38 GMT+4

Signed by: GRIGORYAN GOHAR 5403800298

Կատարող՝
Ռ. Խաչատրյան
Տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժնի պետ
Հեռ.՝ 060-474109